Հաստատված է
«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերի արտահերթ ժողովի կողմից
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

20 սեպտեմբերի
2022թ.

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են:

«Օրենք». «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը,

«Պահառու». «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ԲԲԸ, որը գործում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված համապատասխան լիցենզիայի հիման վրա,

«Հաճախորդ». անձ, որի հետ Պահառուն ունի արժեթղթերի պահառության գործող պայմանագիր: Պահառուի հաճախորդներ կարող են հանդիսանալ այն ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք, պետությունը կամ համայնքները, որոնք պահառության հանձնված արժեթղթերի սեփականատեր են կամ այդ արժեթղթերի նկատմամբ ունեն այլ գույքային իրավունքներ (հավատարմագրային կառավարիչ կամ գրավառու), ինչպես նաև այլ պահառուն, այդ թվում՝ երբ վերջինս հանդես է գալիս որպես անվանատեր տվյալ պահառուի մոտ,

«Անվանատեր». անձ որի անունով անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում, Կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ Պահառուի մոտ (այդ թվում՝ օտարերկրյա կենտրոնական դեպոզիտարիայում կամ օտարերկրյա պահառուի մոտ)՝ առանց սեփականության իրավունքի փոխանցման գրանցվում են այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող անվանական արժեթղթերը: Անվանատեր կարող են լինել պահառության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձինք, ինչպես նաև օտարերկրյա այն պահառուները, որոնք իրենց երկրի օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն՝ իրավասու են իրենց անունով այլ անձանց պատկանող Արժեթղթերի հաշիվներ ունենալ և վարել,

«Պահառության պայմանագիր». պայմանագիր, որի հիման վրա ծագում են Հաճախորդի և Պահառուի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված պահառության գործունեության շրջանակում Պահառուի կողմից Հաճախորդին պահառության ծառայություններ մատուցելու հետ,

«Արժեթղթերի հաշիվ». Հաճախորդի, Հաճախորդի հաշվում հաշվառվող

Արժեթղթերի, այդ Արժեթղթերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, Արժեթղթերի հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետների և օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկությունների վերաբերյալ Պահառուի կողմից վարվող էլեկտրոնային գրառումների ամբողջություն,

«Հանձնարարական». Հաճախորդի կողմից Պահառուին ներկայացվող՝ պահառուական գործառնությունների կատարման կարգադրություն,

«Գործառնության նախաձեռնող». Պահառուական գործառնություն կատարելու պահանջ ներկայացնող անձ,

«ՀԿԴ». Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա բաց բաժնետիրական ընկերություն,

«Կենտրոնական բանկ». Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ,

«Թողարկող». Ցանկացած անձ, որի կողմից թողարկված արժեթղթերը հանդիսանում են պահառության օբյեկտ, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը,

«Պահպանման վայր». այլ պահառու, օտարերկրյա պահառու կամ ռեեստրավար, որում Պահառուն ունի անվանատիրոջ հաշիվ, որում ամփոփ ձևով հաշվառվում են Պահառուի կողմից պահառության վերցված արժեթղթերը: Պետական պարտատոմսերի համար Պահպանման վայր է համարվում Կենտրոնական բանկը,

«Օտարերկրյա պահառու». Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող անձ,

«Օտարերկրյա արժեթուղթ». Արժեթուղթ, որը Պետական պարտատոմս չէ և որի թողարկողը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չէ,

«Պետական պարտատոմս». ՀՀ ֆինանսների նախարարության կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմս:

1.2. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված նշանակությունները:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սույն կանոնակարգով սահմանվում են «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից պահառության ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման կանոնները:

2.2. Սույն կանոնակարգը հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որին կարող է ծանոթա¬նալ ցան¬կա¬ցած շահագրգիռ անձ: Սույն կանոնակարգը ենթակա է հրապարակման Պահառուի պաշտոնական կայքում:

2.3. Պահառուն պահառության գործունեությունը իրականացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Օրենքով, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով, Հաշվարկային համակարգի օպերատորի և Կարգավորվող շուկայի օպերատորի և սույն կանոնակարգով սահմանված կարգով:

2.4. Պահառուի հարաբերությունները ՀԿԴ-ի, այլ ռեեստրավարների և պահառուների հետ կարգավորվում են վերջիններիս հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

2.5. Պահառության գործունեության օբյեկտ կարող են հանդիսանալ ՀՀ-ում թողարկված և շրջանառվող ցանկացած արժեթուղթ, ինչպես նաև օտարերկրյա արժեթղթերը:

2.6. Պահառուի կողմից արժեթղթերի վերաբերյալ կատարված գրառումները հավաստում են արժեթղթերի նկատմամբ Հաճախորդների իրավունքները: Պահառության հանձնված արժեթղթերի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված՝ Հաճախորդի Արժեթղթերի հաշվում համապատասխան գրառում կատարելու պահից:

2.7. Արժեթղթերը պահառության հանձնելը չի հանգեցնում պահառուին արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցման: Պահառուն իրավունք չունի իրականացնել Հաճախորդի արժեթղթերով հավաստվող (արժեթղթերից բխող) իրավունքները, եթե դա նախատեսված չէ պահառության պայմանագրով: Պահառության հանձնված արժեթղթերը

չեն կարող գրավադրվել կամ բռնագանձվել Պահառուի պարտավորությունների դիմաց և Պահառուի լուծարման դեպքում չեն ընդգրկվում լուծարային հաշվեկշռում:

2.8. Պահառուն պատասխանատվություն է կրում պահառության հանձնված արժեթղթերի նկատմամբ իրավունքը հավաստող գրառումները պահպանելու, դրանց գաղտնիությունը ապահովելու, արժանահավատության, այդ գրառումների մասին ճշգրիտ տվյալներ ներկայացնելու և դրանք ժամանակին իրականացնելու, համար:

2.9. Պահառուն պարտավոր է Արժեթղթերի հաշվում գրառումներ կատարել միայն նման գրառումներ կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:

2.10. Պահառուն պարտավոր է գրանցել Հաճախորդի արժեթղթերի՝ գրավով և երրորդ անձանց այլ իրավունքով ծանրաբեռնելու փաստերը՝ պահառության պայմանագրով և սույն կանոնակարգովով սահմանված կարգով:

2.11. Պահառուն պատասխանատվություն չի կրում օրենքով սահմանված կարգով իրենից տեղեկություններ ստացած անձանց կողմից երրորդ անձանց շրջանակում պահառուի կողմից նրանց տրամադրած ծառայողական տեղեկատվության բացահայտման համար:

2.12. Պահառուն իրավունք չունի որոշել և վերահսկել Հաճախորդի կողմից իրեն պատկանող արժեթղթերի օգտագործման ուղղությունները կամ սահմանել նորմատիվ իրավական ակտերով կամ Պահառության պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ՝ իր հաճախորդի արժեթղթերը սեփական հայեցողությամբ տնօրինելու իրավունքների նկատմամբ:

2.13. Պահառուն իրավունք չունի օգտագործել իր Հաճախորդների արժեթղթերը՝ սեփական պարտավորությունները մարելու համար, ինչպես նաև օգտագործել վերջիններս որպես իր սեփական, իր՝ այլ հաճախորդների կամ երրորդ անձանց նկատմամբ ունեցած պարտավորությունների ապահովման միջոց:

2.14. Պահառուն ապահովում է իրեն և Հաճախորդներին պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը՝

սեփական արժեթղթերի հաշիվ և անվանատիրոջ հաշիվ (հաճախորդներին պատկանող արժեթղթերի համար) բացելով ռեեստրում կամ այլ պահառուի մոտ:

2.15. Պահառուն ապահովում է նաև իր յուրաքանչյուր Հաճախորդի պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը (փաստաթղթային արժեթղթերի դեպքում՝ նաև առանձնացված պահպանումը)՝ յուրաքանչյուր Հաճախորդի համար բացելով առանձին Արժեթղթերի հաշիվ:

2.16. Առանձին հաշվառման ենթակա են Հաճախորդներին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերն այն արժեթղթերից, որոնք արժեթղթերի սեփականատեր չհանդիսացող անձը օգտագործում, տիրապետում կամ տնօրինում է օրենքով սահմանված իրավասության կամ արժեթղթերի սեփականատիրոջ հետ կնքված հանձնարարության, գործակալության, կոմիսիայի, հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա: Առանձին հաշվառման ենթակա են նաև իրավունքների սահմանափակումներով արժեթղթերը: Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքից բացի, այլ գույքային իրավունքներ ունեցող անձանց իրավունքները ենթակա են առանձին հաշվառման:

2.17. Պահառուն փոխհատուցում է պահառության իրականացման ժամանակ իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասը, եթե չապացուցվի, որ վնասներն առաջացել են անհաղթահարելի ուժի պատճառով կամ Հաճախորդի մեղքով:

2.18. Պահառության գործունեությունը ներառում է նաև Պահառության պայմանագրով նախատեսված կարգով արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով Հաճախորդին ծառայությունների մատուցումը:

3. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պահառության գործունեության շրջանակում Պահառուն կարող է իր հաճախորդին առաջարկել հետևյալ ծառայությունները՝

3.1.1. Հաճախորդի Արժեթղթերի հաշվի բացում և վարում,

3.1.2. Հաճախորդի արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցում,

3.1.3. Հաճախորդի արժեթղթերի անվանատեր հանդես գալը,

3.1.4. Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողի կամ այլ պահառուի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից Թողարկողին կամ այլ պահառուին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցում,

3.1.5. Հաճախորդի Արժեթղթերի հաշվին հաշվեգրված արժեթղթերի հետ կապված թողարկողների կորպորատիվ գործողությունների արտացոլում,

3.1.6. Հաճախորդի արժեթղթերի հաշվին հաշվեգրված արժեթղթերի գրավով կամ այլ ծանրաբեռնվածության գրանցում,

3.1.7. Արժեթղթերի հաշվից քաղվածքների եւ գործառնությունների մասին տեղեկանքների (հաշվետվությունների) տրամադրում:

4. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

4.1. Հաճախորդին պահառության ծառայությունների մատուցումը և նրա համար Արժեթղթերի հաշվի բացումը կատարվում է Պահառության պայմանագրի հիման վրա:

4.2. Պահառության պայմանագիրը կնքվում է գրավոր:

4.3. Մինչև Պահառության պայմանագիր կնքելը Պահառուն Հաճախորդին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու պահառության գործունեությունը կարգավորող իրավական ակտերին:

4.4. Պահառության պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:

4.5. Պահառուն Հաճախորդին Ծառայությունները մատուցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Պահառության պայմանագրի պահանջներին համապատասխան:

4.6. Պահառության պայմանագրի կնքումը և Պահառուի մոտ հաշվի բացումը Հաճախորդին չի պարտավորեցնում անմիջապես արժեթղթեր մուտքագրել այդ հաշվին:

4.7. Պահառության պայմանագիր կնքելու համար մինչև պայմանագրի կնքումը Հաճախորդը պետք է ներկայացնի Ընկերության Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը:

5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄԸ

5.1. Պետական պարտատոմսերի հաշիվներ.

5.1.1. Արժեթղթերի հաշիվների երկարությունը 13 նիշ է:

5.1.2. Արժեթղթերի հաշիվներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

X1	X2	X3	X4	X5	X6	X7	X8	X9	X10	X11	X12	X13
Պահառուի կոդ					Կարգ.	Հաճախորդի կոդ						Ստ.

X6 մասնիկը հաշվի կարգավիճակն է և կարող է ունենալ հետևյալ կոդերը՝

4. ազատ,
5. գրավով սահմանափակված,
6. արգելադրված,
7. առևտրի համար նախատեսված,
8. գրավադրված արգելադրված:

X7X8X9X10X11X12 – Հաճախորդի կոդն է, ընդ որում. X7X8 մասնիկները ցույց են տալիս Հաճախորդի տեսակը. X7 մասնիկը ցույց է տալիս ներդրողի կարգավիճակը՝

1. ռեզիդենտ,
2. ոչ ռեզիդենտ:

X8 մասնիկը ցույց է տալիս Հաճախորդի խումբը ըստ պատկանելության՝

1. բանկային հաստատություն,
2. ներդրումային ընկերություն,

3. ֆինանսավարկային կազմակերպություն (ոչ բանկային),
4. այլ իրավաբանական անձ,
5. ֆիզիկական անձ:

Հաճախորդի կոդը չի կարող հավասար լինել ”000000”, որն արտացոլում է Պահառուին պատկանող սեփական պարտատոմսերը:

X13- ստուգիչ նիշն է, որը հաշվարկվում է 5.3. կետով սահմանված կարգով:

6. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Պահառուն պահառության գործառնություններ է կատարում Հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի (այդ թվում՝ բրոքերային ընկերության կամ հավատարմագրային կառավարչի), ՀԿԴ-ի, այլ ռեեստրավարի կամ պահառուի, Պահառուի աշխատակիցների և Պահառության պայմանագրով նախատեսված այլ անձանց հանձնարարականների (այդ թվում՝ էլեկտրոնային կարգադրությունների) հիման վրա: Որպես հանձնարարական կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը՝

6.1.1. Հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի, Կենտրոնական դեպոզիտարիայի, այլ ռեեստրավարի կամ պահառուի, Պահառուի պաշտոնատար անձանց և պահառության պայմանագրով նախատեսված այլ անձանց կողմից իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան տրված հանձնարարականը,

6.1.2. ոչ քաղաքացիաիրավական գործարքի արդյունքում (դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա) արժեթղթերի նկատմամբ իրավունքի փոխանցման դեպքում՝ այդ փոխանցումը հիմնավորող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթղթերը:

6.2. Եթե Հաճախորդի Արժեթղթերի հաշվում հաշվառվող որևէ արժեթուղթ սեփականության իրավունքով պատկանում է մի քանի անձանց (համասեփականատերերի), ապա տվյալ արժեթղթով Պահառության

գործառնության իրականացման հանձնարարական կարող է ներկայացնել միայն այդ համասեփականատերերի կողմից լիազորված անձը:

6.3. Յուրաքանչյուր պահառության գործառնության կատարման ավարտին կազմվում և սույն կանոնակարգով նախատեսված անձանց տրամադրվում է գրառման կատարման կամ մերժման մասին հաշվետվություն, քաղվածք կամ տեղեկանք: Պահառության պայմանագրով կարող է նախատեսվել հաշվետվությունների, քաղվածքների կամ տեղեկանքների ներկայացման էլեկտրոնային եղանակ: Գործառնության կատարման հաշվետվությունը, քաղվածքը կամ տեղեկանքը պահառուի կողմից տրամադրված պաշտոնական փաստաթուղթ է, որը հիմք է ստացողի համար իր հաշվառման համակարգում համապատասխան գրառումներ և հաշվապահական ձևակերպումներ կատարելու նպատակով: Գործառնության կատարման հաշվետվությունը, քաղվածքը կամ տեղեկանքը պարտադիր պետք է ներառի տվյալ գործառնության համար գանձված ծառայության վճարի չափի մասին տեղեկատվություն:

6.4. Պահառուն Հաճախորդի պահանջով իր մոտ վարվող Հաճախորդի Արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տրամադրում է ցանկացած տեղեկություն, ներառյալ արժեթղթերի փակված հաշիվների վերաբերյալ՝ փակման պահից երեք տարվա ընթացքում:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Պահառուն պարտավոր է ապահովել Հաճախորդի հաշիվների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը: Այդպիսի տեղեկությունների թվին են դասվում (չսահմանափակվելով).

7.1.1. Հաճախորդի Արժեթղթերի հաշվի վիճակի վերաբերյալ տեղեկությունները,

7.1.2. Հաճախորդի Արժեթղթերի հաշվով կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները,

7.1.3. այլ տեղեկությունները, որոնց գաղտնիության պահպանման

վերաբերյալ առկա է Հաճախորդի գրա¬վոր դիմումը:

7.2. Պահառուի մոտ վարվող Արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն Հաճախորդին, նրա Լիազորված ներկայացուցչին, իրավասու պետական մարմնիններին (ՀՀ օրենսդրությամբ նրանց վերապահված լիազորությունների իրականացման շրջանակում), Թողարկողին և նրա Լիազորված ներկայացուցչին, Օտարերկրյա պահառուին, որի մոտ բացված է Պահառուի Օտարերկրյա արժեթղթերի Անվանատիրոջ հաշիվը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց:

7.3. Պահառուի կողմից Հաճախորդի Արժեթղթերի հաշվի մասին գաղտնիք ներկայացնող տեղեկությունների բացահայտման դեպքում Հաճախորդն իրավունք ունի Պահառուից պահանջել խախտված իրավունքի վերականգման նպատակով վնասի հատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4. Պահառուն իրավունք ունի սույն բաժնով նախատեսված գաղտնի տեղեկությունները բացահայտել երրորդ անձանց միայն Հաճախորդի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

8. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

8.1. Ընկերության կողմից պահառության գործունեությունը իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

8.2. Արժեթղթերի հաշիվների բացումը, վարումը, փակումը, ինչպես նաև Արժեթղթերի հաշիվներով գործառնությունների իրականացումը կատարվում է համակարգչային ծրագրի համապատասխան դաշտերում տեղեկությունները մուտքագրելու միջոցով:

8.3. Արժեթղթերի հաշվառումը, ինչպես նաև դրա հետ կապված փաստաթղթերի մշակումն ու տեղեկությունների տրամադրումը Հաճախորդներին իրականացնում են այդ նպատակով լիազորված աշխատակիցները:

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն կանոնակարգը Պահառության պայմանագրի անբաժանելի մասն է:

9.2. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու պահից:

9.3. Սույն կանոնակարգով նախատեսված ծառայությունների մատուցման միջնորդավճարները գանձվում են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից հաստատված սակագների համաձայն:

9.4. Հաճախորդին Ծառայությունների մատուցման հետ կապված Պահառուի բոլոր ծախսերը փոխհատուցվում են Հաճախորդի կողմից՝ փաստացի արժեքով:

9.5. Սույն կանոնակարգով սահմանված հանձնարարականները, դիմումները և/կամ հարցումները հաստատվում են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:

9.6. Պահառուն իրավունք ունի սույն կանոնակարգի մեջ փոփոխություններ մտցնել առանց Հաճախորդի նախնական համաձայնության:

9.7. Պահառուն տեղեկացնում է Հաճախորդներին սույն կանոնակարգում կատարված փոփոխությունների մասին՝ դրանց ուժի մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ:

9.8. Ընկերությունը կարող է սույն կանոնակարգում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Ընկերությունը պարտավոր է ծանուցել հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Ընկերության տարածքում և/կամ Ընկերության ինտերնետային կայքում հասանելի դարձնելու և/կամ հաճախորդների կողմից տրամադրված էլեկտրոնային փոստային հասցեներին ուղարկելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց 10 օր հետո: